գեղ էր շինած, հայ սաֆի։ Կացաք անդ իրեք օր։

Եւ անտի եկաք ԻԶՄԻՏ։ Եւ սա մեծ սկելէ էր. եւ պէնտէր քաղաք եւ չէն։ Կայր ի նմա երկու էրէց եւ հարիւր ութսուն տուն հայի։ Կացաք անդ ամիս մի. եւ եկաք կրկին դարձեալ ի Ստամպօլ։ Եւ հանդիպեցաք ի վերայ ծովու ատա մի, որ պիղծն Վաղէս արկեալ գուրբն Ներսէս ի ծովն. բայց ի նա ոչ եկաք։ Եւ կային Հայք ի այլ կղզիս։

Եւ կեցաք ի Ստամպօլ իրեք ամիս։ Վարդապետն գնաց յայլ տեղ, զի իւր երկիրն եւ Մշու օվան Խըզլպաշն աւիրել էր, եւ զմարդիկս գերի տարել։ Վասն որոյ երկեայ գնալ յայն կողմն։ Եւ մնացեալ ժամանակս ինչ ի Ստամպօլ տրտում եւ լի սգով՝ սպասէի Աստուծոյ իմոյ՝ ակն ունելով մխիթարութեան, մինչեւ այց արասցէ ինձ Տէր եւ հասուսցէ զիս փափաղանացս։

5· ՈՒՂԵԳՆԱՑՈՒԹԻՒՆ Ի Կ· ՊՈԼՍՈՑ Ի ՎԵՆԵՏԻԿ

Ապա զմտաւ ածի եւ ասեմ. մինչ խաղաղանայ երկիրն Մշու, ես երթայց սուրբ դերեզմանն առաքելոց Պետրոսի եւ Պօղոսի։ Եւ մինչ այն խորհրդեան էի, ապէնիազն Աստուած, որ տայ ամենայնի առատապէս ըստ

270 յատկեալ։ — 274 յերկիրն։ — 275 յօվան | էր] էլ։ — 276 երկայ։